դատարանը հանգել է հետևությունների /տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թվականի նոյեմբերի 9-ի թիվ 3-1762 /ՎԴ/ որոշումը/:

Դատարանը գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը /տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թվականի հունվարի 13-ի թիվ ԵԱԴԴ/0452/02/19 որոշումը/:

Սույն գործի հետագա քննության անհնարինության վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված պատճառաբանությունները հիմնավորված չեն:

6.Դատական ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումարը: Քանի որ հայցը ենթակա է մերժման, հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի՝ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի միջև 29.01.2024թ.-ին կնքված թիվ ՈՍԱԲԿԳՀԱՊՁԲ-24/1-5, 29.01.2024թ.-ին կնքված N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 24/4-9, 29.01.2024թ.-ին կնքված ՈՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5, 29.01.2024թ.-ին կնքված ՈՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6, 15.03.2024թ.-ին կնքված ՈՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2, 23.07.2024թ.-ին կնքված N ՍԱԲԿԳՀԱՊՁԲ-24/32-11 մատակարարման պայմանագրերը՝ "ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք "ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՓԲԸ-ի 16.01.2025թ-ի թիվ No ՍԱ-34 որոշումը՝ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am